ՄԱՅՐԵՆԻԻ (ընթերցանության) ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

(2024-2025 ուստարի)

(Տևողությունը՝ **150** րոպե)

5-րդ դասարան

Նեդար Էբրահիմի Փոքրիկ սիրտս ո՞ւմ նվիրեմ

Ես մի փոքրիկ սիրտ ունեմ: Շատ փոքրիկ, շա՛տ-շա՛տ փոքրիկ:
– Մարդու սիրտը չպետք է դատարկ մնա, – ասում է տատիկը, – եթե դատարկ մնա, դատարկ ծաղկամանի նման տգեղ կլինի և մարդուն ցավ կպատճառի: Ահա, հենց այդ պատճառով էլ երկար ժամանակ է՝ մտածում եմ՝ այս փոքրիկ սիրտը ո՞ւմ նվիրեմ: Այսինքն՝ ո՞ւմ պետք է սրտիս մեջ տեղավորեմ, որ բոլորից լավը լինի: Ճիշտն ասած՝ ախր, չգիտեմ՝ ինչպես ասեմ…Սիրտս ուզում է՝ այս ամբողջ-ամբողջ, փոքրիկ-փոքրիկ սիրտս՝ մի փոքրիկ, սիրուն տնակի պես, մի այնպիսի մեկին նվիրեմ, որին շա՛տ-շա՛տ եմ սիրում…կամ…չգիտեմ…մեկին, որ շատ լավն է: Մեկին, որ իսկապես արժանի է իմ շատ փոքրիկ և մաքուր սրտի մեջ տնակ ունենալու: Ճիշտ եմ ասում, չէ՞:
– Սիրտը հյուրանոց չէ, որ մարդիկ գան, մի երկու-երեք ժամ կամ մի երկու-երեք օր այնտեղ մնան ու հետո գնան, – ասում է հայրիկը, – սիրտը ճնճղուկի բույն չէ, որ գարնանը շինվի, իսկ աշնանը քամին այն իր հետ քշի ու տանի… Ճիշտն ասած՝ չգիտեմ՝ ինչ է սիրտը, բայց գիտեմ, որ տեղ է շա՛տ-շա՛տ լավ մարդկանց և մշտապես… Դե…Երկար մտածելուց հետո վճռեցի՝ սիրտս նվիրել մայրիկիս, ամբողջ սիրտս, ամբողջը նվիրեմ մայրիկիս և կատարեցի այդ բանը…Բայց, ո՛վ զարմանք, երբ նայեցի սրտիս, չնայած մայրիկս հանգիստ տեղավորվել էր նրա մեջ և իրեն էլ շատ լավ էր զգում, այդուհանդերձ նկատեցի, որ կեսը դեռևս դատարկ էր մնացել…Դե, իհարկե, հենց սկզբից ես պիտի գլխի ընկնեի ու սիրտս երկուսին նվիրեի՝ հայրիկիս ու մայրիկիս: Այդպես էլ վարվեցի: Հետո, հետո գիտե՞ք՝ ի՞նչ եղավ: Այո, իհարկե, նայեցի ու տեսա՝ սրտիս մի մասում դեռևս դատարկ տեղ է մնացել…Անմիջապես վճռեցի սրտիս դատարկ մնացած անկյունը նվիրել մի քանի հոգու: Մի քանի հոգու, ում շատ եմ սիրում: Մեծ եղբորս, փոքրիկ քրոջս, պապիկին, տատիկին, իմ բարի քեռուն և ուրախ բնավորությամբ հորեղբորս էլ տեղավորեցի սրտիս մեջ: Մտածեցի՝ հիմա արդեն սրտիս մեջ կարգին խճողում է…այսքան մարդ մի՞թե հնարավոր է այսքան փոքրիկ սրտում տեղավորել: Բայց երբ նայեցի սրտիս, Աստված իմ, Աստված իմ, գիտե՞ք ինչ տեսա: Տեսա, որ այս բոլոր մարդիկ տեղավորվել են սրտիս ճիշտ կես մասի մեջ, ճիշտ կեսի, թեև հանգիստ նստել, ասում-խոսում ու ծիծաղում էին, և ոչ մեկը չէր բողոքում տեղի նեղվածքից: Դե…հետո հերթը…Այո, ճիշտ է, սրտիս մնացածը, այսինքն՝ դատարկ մնացած կեսը ուրախությամբ ու զոհունակությամբ նվիրեցի այն բոլոր լավ մարդկանց, ովքեր ապրում են մեր թաղում, և բոլոր այն լավ բարեկամներին, որ ունեմ, և բոլոր ընկերներիս և բոլոր այն

ուսուցիչներին, ովքեր սիրում են երեխաներին…Եվ գիտե՞ք, թե ինչ եղավ…Աստված իմ, այսքան փոքրիկ սիրտը ինչպե՞ս կարող է այսքա՛ն մեծ լինել: Ճիշտն ասած, խոսքը մեր մեջ, հայրս մի հորեղբայր ունի: Հայրիկիս այս հորեղբայրը շա՛տ, շա՛տ, շա՛տ փող ունի: Ես երբ տեսա՝ բոլոր լավ մարդիկ տեղավորվում են սրտիս մեջ, աշխատեցի հայրիկիս այս հորեղբորն էլ տանեմ սրտիս մեջ և մի անկյուն էլ նրան հատկացնեմ…բայց…չտեղավորվեց…ինչ արեցի, չտեղավորվեց…շատ խղճացի…բայց ի՞նչ անեմ, չտեղավորվեց, էլի, իմ մեղքը հո չի, իր մեղքն է: Այսինքն՝ ճիշտն ասած, երբ ինքն էլ դժվարությամբ, մի կերպ տեղավորվում էր սրտիս մեջ, փողերի հսկա սնդուկը դուրս էր մնում, նա էլ հևիհև դուրս էր վազում սրտիցս, որպեսզի վերցնի իր սնդուկը…Այո…կամաց–կամաց հասկանում էի, թե մի փոքրիկ-փոքրիկ սիրտ որքա՛ն կարող է մեծ լինել: Մի գիշեր, երբ հիշեցի այն մեծ պատերազմի ծանր օրերն ու գիշերները, միանգամից վեր թռա ու ճչացի. «Սրտիս մնացած մասը կնվիրեմ բոլոր նրանց, ովքեր կռվեցին և կեղտոտ թշնամուն մեր հողից, մեր երկրից ու մեր տնից դուրս վռնդեցին…»:…Հիմա արդեն իմ սիրտը նմանվել էր մի մեծ քաղաքի, դպրոց ուներ, հիվանդանոց ուներ, զորանոց ուներ, փողոց, թաղ, պողոտա ուներ և դարձյալ մի աշխարհի չափ դատարկ տեղ ուներ… Ինքս ինձ ասացի. «Այլևս բավական է ընտրություն անել, իմ սիրտը պատկանում է աշխարհի բոլոր-բոլոր լավ մարդկանց՝ աշխարհի այս ծայրից մինչև մյուս ծայրը…»: Դուք ինքներդ տեսնում եք՝ հիմա միայն մի շա՛տ-շա՛տ փոքրիկ անկյուն է դատարկ մնացել սրտիս մեջ: Գիտեք՝ այդ տեղը ում համար եմ թողել, այո՛, ճիշտ է, բոլոր վատ մարդկանց, միայն՝ մի պայմանով, որ հրաժարվեն վատ լինելուց և վատ արարքներ կատարելուց. երեխաներին չնեղացնեն, ծովը չկեղտոտեն, կենդանիներին չսպանեն և ոչ մեկի նկատմամբ բռնություն չգործադրեն… Վատ մարդիկ էլ, եթե լավանան, իրավունք ունեն, չէ՞, իմ սրտի մեջ մի փոքրիկ տնակ ունենալու...չէ՞: Կարծում եմ՝ եթե վատ մարդիկ բարիանան ու գան, դարձյալ իմ սրտի մեջ մի փոքրիկ տեղ կմնա…գուցե անտառների համար, սարերի, ձկների, եղնիկների, փղերի… և շատ ուրիշ բաների համար… Իսկապես, զարմանալի է, հայտնի չէ՝ սա սի՞րտ է, թե՞ ծով: Այսքան փոքրիկ սիրտն, ախր, ինչպե՞ս է, որ երբեք չի լցվում: Դե լավ, դա ինձ չի վերաբերում: Երբ մեծանամ, գուցե հասկանամ, թե ինչու է այդպես, սակայն հիմա, մինչև այն պահը, երբ դեռ սրտիս մեջ տեղ կա, պետք է այդ տեղը նվիրեմ լավ ու բարի մարդկանց: Սիրտը հենց դրա համար է, ճիշտ չէ՞:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ – 5-րդ դասարան

1. Մի քանի նախադասությամբ արտահայտիր վերաբերմունքդ:

_____
_____
_____
_____

2. Ի՞նչ բառերով է հեղինակը բնութագրում սիրտը:

_____
_____

3. Տեքստում գտի՛ր համեմատություններ:

_____
_____
_____
_____

4. Ինչ ես կարծում՝ կլցվի՞ երբևէ սիրտը, իսկ եթե լցվի, ինչ կկատարվի տղայի հետ:

_____
_____
_____
_____
_____

5. Գտի՛ր ***լավ, հարուստ, փոքրիկ, բարի, միանգամից*** բառերի հոմանիշները:

_____
_____

6. Տեքստում գտիր վատ մարդկանց բնութագրող տողերը:

_____
_____
_____
_____

7. Ինչի էր՞ նմանվել սիրտը, երբ տղան բոլորին տեղավորել էր:

_____
_____
_____

8. Տեքստում գտի՛ր հիմնական գաղափարն արտահայտող տողերը:

_____

_____

9. Ի՞նչ կլինի, եթե մարդու սիրտը դատարկ մնա:

_____

_____

_____

_____

10. Ինչպե՞ս էին զգում իրենց սրտում տեղավորվածները՝ ըստ տեքստի:

_____

11. Ինչի՞ հետ են տատիկն ու հայրիկը համեմատում սիրտը: Տեքստից գտի՛ր համապատասխան տողերը:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

12. Ովքե՞ր են առաջինը տեղավորվում տղայի սրտի մեջ, ինչու՞:

_____

_____

_____

_____

13. Սրտի մեջ կարող են տեղավորվել ոչ միայն բարի մարդիկ, այլև

ա)_____

բ)_____

գ)_____

14. Ինչու՞ հարուստ հորեղբայրը չտեղավորվեց տղայի սրտում:

_____

_____

15. Ի՞նչը կամ ո՞վ տեղ չունեն քո՛ սրտում, մեկնաբանի՛ր:

16. Տեքստից գտի՛ր հնչյունափոխված 5 բառ, գրի՛ր հնչյունափոխության տեսակը:

17. Տեքստից դուրս գրի՛ր ածանցավոր 5 բառ, այդ ածանցներով կազմիր մեկական ուրիշ բառ:

18. Գտի՛ր տեքստի անհոդակապ բարդ բառերը

19. Գտի՛ր ***դատարկ, վատ, հսկա, կեղտոտ, սիրուն*** բառերի հականիշները:

20. Ո՞ւմ են ասում «մեծ սիրտ ունի»: Մտքերդ շարադրիր երկու-երեք նախադասությամբ՝ գործածելով հականիշ բառեր: